ՑԱՋԿԵՐՏ.

Ձեր քաջութիւնը, հաւատարմութիւնը և տիրասիրութիւնն արժանի են մեծ պատուոյ և փառաց, ուստի և ես կամենում եմ վարձատրել և խրախուսել զձեզ. Մինչեռսէչ, յաղթութեան և հաւատարմութեան շքանշաններ տուր այս պատուական նախարարաց.

ՄԻՀՐՆԵՍԷՉ.

Արժանի են այդ շնորհաց (Լը Դիդ).

ՑԱՋԿԵՐՏ.

Ապերախտութիւն է չգնահատել աշխատաւորաց անձնանուիրութիւնը.

(Կլարոնոպ-է). Ս. Գնոնէ.

ԱԶԳԱՅԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ.

ՄԻԱՅԵԱԼ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

ԵՒ

ՀՐԱՒԷՐ

Մարդկանց միութիւնը որպիսի և իցէ ձեռնարկութիւնների մէջ մի անդիմադրելի ոյժ է, ոյժ՝ որի դէմ լուծուում դիւրանում են ամենայն դժուարութիւններ: Ընդհանուր ազգաց պատմութիւններին փոքր ի շատէ տեղեակ անձն ակնյայտնի տեսնում է թէ՝ այս միութիւնը ինչ հրաշքներ է գործել մարդկանց ամենատեսակ ձեռնարկութիւնների մէջ: Այո՛ նոյն ինքն Վերին Տեսչութիւնը մարդկանց կեանքի երջանկութեան աղբիւրը սահմանել է նոցա միութեան՝ իսկ թշուառութիւնը բաժանման մէջ:

Յամանակի ձախողակի հանգամանքներով ի սփիւռը աշխարհի տարացրուեալ մեր Հայ ազգն ևս դառն փորձերից զգաստացած ներքին համոզմամբ ընդունելով այս անտարակուսելի ճշմարտութիւնը, մանաւանդ այս վերջին տասնեակ տարիներում ի

մի ձուլեց իւր մասնաւոր ուժերը և զանազան տեղերում այլ և այլ ընկերութիւններ կազմեց՝ միացեալ ուժով իւր հասարակութեան նիւթական և մտաւոր պիտոյքներին դեղ ու դարման անելու համար, որի բարերար հետևանքները այժմ զգալի են ամենիս։

Բայց նոյն իսկ Հայաստանի հեռաւոր ափերում և մթին խորքերում ցրուած ապրում էր մեր Հայ եղբայրների մի նշանաւոր մեծամասնութիւն, բիւր տեսակ մտաւոր և նիւթական կարօտութիւնների մէջ ցպարանոց թաղուած և ազգային դաստիարակութիւնից ու կրթութիւնից իսպառ զրկուած, որոնք երկար դարերի ընթացքում հազիւ կարողացած են պահպանել միայն իւրեանց Հայանունն ու Հայկական Առաքելական եկեղեցւոյ դաւանութիւնը։ Սոցա այս տառապեալների ի խաւարէ ի լոյս և ի գիտութիւն վերածնութեան քաղցր և դժուարին գործը և աւելի արդիւնաւորութիւնը Վերին Տեսչութիւնը պահած է եղել Կ. Պոլսոյ Հայոց Մէյոյէալ ընկերութիւնը, որի խոհեմ և եռանդուն Անդամները մեր վերոյիշեալ բազմակարօտ Հայ եղբարց, հետևաբար և ընդհանուր Ազգիս կրթութեան և դաստիարակութեան նուիրական սիրով վառուած՝ ամենատեսակ բարոյական և նիւթական ջանք ու աշխատանք ի գործ դրին, և միացեալ ուժով զանազան ներքին ու արտաքին արգելքների յաղթելով՝ կարճ ժամանակամիջոցում հիմնեցին Հայաստանի և Կիլիկիոյ մէջ տասն և հինգ հատի չափ ազգային հայկական դպրոցներ և Ն վարժապետանոց կարելին բարեկարգութեամբ և նպատակայարմար ուղղութեամբ, որոց թիւը օր ըստ օրէ աւելացնելու ջանադիր են, և որոնցից, մե-

ծայոյս եմք, թէ մօտաւոր ապագայում կընծայեն Ազգիս անձնական և ազգային պարտք և իրաւունք ճանաչող զարգացած Անդամներ՝ եթէ սիրով և խոհեմութեամբ յարատեւէ նոյն ընկերութիւնը։

Յիշեալ ընկերութիւնը իւր յոյսը մեր համայն ազգայնոց աջակցութեանց և առատաձեռն նպաստների վերայ բեւեռած՝ առանց երբէք պատրաստելու հաստատուն կարեւոր եկամուտները՝ գեղեցիկ և գովելի իմն վստահութեամբ գործում է և շարունակում իւր ստանձնած պաշտօնը արդիւնաւորելու համար։

Ահա մի այսպիսի մեծ և ազգաշահ գործի մասնակից լինելու հրաւիրումնք և Ձեզ, սիրելի՛ ռուսիաբնակ Հայեր, մեծ յուսով ու ակնկալութեամբ պատկեցէք Ձեր վերայ այն բարենպատակ ընկերութեան և մեր ունեցած յոյսն ու ակնկալութիւնը։ Իւրեանց Ազգի հաստատուն յառաջադիմութեանը և գեղեցիկ ապագային փափագող անհատների անհրաժեշտ պարտաւորութիւնն է ձեռնտու լինել միմեանց և բաժանել ընդհանրաշահ գործի աշխատանքը. օգնեցէք ինչով և որչափ կարողէք, եթէ արդարև ցանկանումէք Ձեր Ազգի նիւթական և բարոյական երջանկութիւնը։ Մի այսպիսի վեհ և բազմարդիւն ձեռնարկութիւն, որչափ եռանդուն, որչափ և անձնազոհութեամբ լինէր սոյն Ընկերութեան աշխատութիւնը, անշուշտ զի կարող հասնել ցանկացած նպատակի առանց ընդհանուրիս աջակցութեան, մանաւանդ ներկայումս մեզ շրջապատող հանգամանքների մէջ, որոնք խոստանումն այնչափ արդիւնք, որչափ կանուխ մենք կըշտապենք այն ձեռնարկութեան նպատակին հաս-

նելու, որքան բազմապատկենք մեր նիւթական առատաձեռն օժանդակութիւնը, նոյնքան եւս կոգեւորենք և խրախոյս կտանք այդ բարենպատակ ընկերութեանը և հետեւաբար կփութացուցանենք բիւրաւոր հայ զաւակների տգիտութեան ճիրաններից փրկութեան օրը, որով և մեզ համար բաժին վաստակած կլինինք այն յաւիտենական յիշատակից ու անվերջ օրհնութիւններից, որոնցով մեր ապագայ սերունդն անշուշտ պէտք է անմահացնէ իւր փրկութեան գործին մասնակցողների անունները։

Աղգիս Վ. ԵՒ. Հայրապետի օրհնութեան և խրախուսանաց եւս արժանացած է յիշեալ ընկերութիւնը։

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ ՍՈՎԵԼՈՅ ԽՆԱՄՔԱՏՐ ՅԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ԵՒ

ՀՐԱՒԷՐ.

Այս օրերս Աղգիս Վ. Եհատիառ Հայրապետի հրամանով եւ նախընթաց կարգադրութեամբ Ս. Էջմիածնի Սինօդը իւր կարեւոր հրահանգների հետ միասին ուղարկեց Ռուսաստանի Հայոց Կոնսիստորիաներին եւ Հոգ. Կառավարութիւններին Հայաստանի սովելոյ խնամատար Յանձնաժողովի նուիրատոմսակները։ Մեծայոյս եմք, որ մեր Ռուսաստանի Աղգայինները, ինչպէս շատ դէպքերում, նոյնպէս եւ առաւել եւս այս դէպքում կպսակեն յիշեալ Յանձնաժողովի եւ Վ. Եհատիառ Հայրապետի յոյսն ու ակնկալութիւնը իւրեանց առատ նուիրաբերութիւններով։

Ռուսաստանի Հայեր, Դուք, այո՛, շատ կարեւոր դէպքերում կատարել էք Ձեր կարեաց չափով մեր Տաճկաստանի Հայ եղբայրների վերաբերութեամբ՝ Ձեր ազգային պարտականութիւնները. մի գանգատիք եւ այս չարաղէտ դէպքում կատարել եւ ներկայ ամենատանջրաժեշտ պարտականութիւնը դէպի նոյն եղբայրները, պարտականութիւն՝ որից կախում ունին նոցա կեանքն ու մահը։